

Եզրայի վանքին ղրմացը՝ այժմու Թանթուր կոչուած բլուրին վրայ Ջ. դարուն կար Ս. Սարգիս անուամբ վանք մը, ուր, ըստ Պրոկոպիոսի, Յուստինիանոս կայսրն ալ ջրհոր մը փորել տուած էր: Յովհաննէս Մոսքոս ալ կը յիշէ զայն իր «Մարգ Հոգեւոր» կոչուած գիրքին մէջ (Գլ. 182). նոյն վանքին կողմէն, 536ին ալ, Մինաս պատրիարքի օրով, Կ. Պոլսի ժողովին պատուիրակներ ղրկուած են (Revue de l'Orient Chretien, 1900, էջ 279): Commemoratorium de Casis Dei յիշատակարանն ալ Երուսաղէմէն երկու փորսախ հեռի վանքերու մասին խօսած ատեն կը զրէ. «Ս. Կարապետի վանքը (Ս.յնքեարիմ) կը գտնուին երկու ֆահսնայ. Ս. Թէոդոսի մէջ՝ երկու. Ս. Սարգսի մեջ՝ մեկ:

1620ին Քուարէզմիոս լատին պատմագիրը նոյն տեղոյն վըրայ տեսած է եկեղեցիի մը և վանքի մը աւերակները (S'e'u Meistermann, Nouveau Guide de Terre Sainte էջ 208): Տեղոյն գիրքը, ինչպէս նաև Երուսաղէմի և Բեթղեհէմի մերձաւորութիւնը հաւանական կը դարձնեն հոն տեղ վանքի մը հաստատութիւնը: Պատմականօրէն ճիշդ է որ, ինչպէս վերի տողերէն տեսանք, հոն Ս. Սարգիս անուամբ վանք մը գոյութիւն ունեցած է. բայց թէ Եզրիպոսի պատրիարքին 1172 թուականին հիմնադրած վանքը նոյն Ս. Սարգիս վանքի տեղոյն վրայ էր. չգիտենք. բայց կը կարծենք թէ տեղոյն յարմարութիւնը և զեղեցկութիւնը, անուան նոյնութիւնը, և թերևս կիսափուլ շէնքերու գոյութիւնը, Երուսաղէմի և շրջակայ վանքերու մերձաւորութիւնը, ազդակներ եղած ըլլան եզրիպոսի պատրիարքին հին Ս. Սարգսի վանքին տեղոյն վրայ հիմնելու նոր Ս. Սարգսի հայկական վանքը. և արդէն վանօրէից պատմութեան մէջ աննախընթաց չէ հին վանքի մը վրայ նոր վանք մը կառուցանելու սովորութիւնը, թէև ըլլայ ան ուրիշի մը կողմէն. ինչպէս է Գաթիզմայի Ս. Աստուածածնի վանքը, նոյնպէս Բեթղեհէմի ճանապարհին վրայ: Պատրիարքին հիմնարկած Ս. Սարգսի վանքը հաւանաբար 1187ին կործանուած է Սալահէտտինի յարձակմանց ժամանակ:

